

**ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆԻՉ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ**

- 1. ՍԻՐԵՑԷ՛Ք ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ**
- 2. ՍԻՐՈՅ ՀՐԱՊՈՅՐԸ**
- 3. ՍԻՐՈՅ ՏՐԱՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ**
- 4. ՅԻՍՈՒՍ Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԻՐ
ՀԵՏԵՒՈՐԳՆԵՐԷ. ՀԱՒԱՎՏՔ, ԹԷ ՍԷՐ**
- 5. ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ ՀԱՒԱՎՏՔ**

**THE NEW COMMANDMENTS OF JESUS
WHO IS THE SUPREME REVELATION OF GOD**

**ԱՊԷԹ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1999**

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

**Այս համեստ խորհուրդ մտածումներս
կը ձօնեմ այն բոլոր սիրելի հայրենակիցներուս,
որոնց հաւատքը և նախանձախնդրութիւնը առ
Աստուած զօրաւոր է, սակայն նախապաշարուած
անգիտութեան և նեղմտութեան պատճառաւ:**

Ձունիմ յաւակնոտութիւնը թէ ես իրենցմէ աւելին գիտեմ: Իմ միակ
գիտցածս ա՛յն է, որ մեր սիրելի Փրկիչը Յիսուս կու լա՛յ մեր զիրար չսիրե-
լուն համար:

Որպէս Հայ-Քրիստոնեաներ, բարձրացնենք մեր աչքերը ու նայի՛նք
Խաչեցեալին: Տեսնե՛նք անոր տառապանքն ու ցաւը, որուն ընդմէջէն Ան
արցունքոտ աղերսանքով կ'ըսէ Բեգի և ինձի.

***«Ես կը խաչուիմ, որովհետեւ սիրած եմ ձեզ:
Դո՛ւք ես եղէ՛ք հանդուրժող, ու սիրեցէ՛ք զիրար»:***

Ակաբո Նորատուկեան
Հոկտեմբեր, 1999
Թորոնթօ

“ՍԻՐԵՑԷ՛Ք ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ”

ՂԺՈՒԱՐԱԲԱՏԱԿՆԱԿԻ ԽՕՍԲԵՐ, մանաւանդ անհանդուրժելի պատուէրներ կը կարծուին ըլլալ Յիսուս Բրիստոսի ասուածապատգամ հրահանգները: Երբ սիրենք, հաւատանք ու մեծարենք ազգային հերոս մը, կը ջանանք ըմբռնել նաեւ անոր հրահանգած պատուէրները և հնազանդիլ անոր հրամաններուն, մանաւանդ երբ ուխտեալ ու նուիրուած անդամներն ենք անոր շարքերուն: Ո՞վ է այն ֆետային որ պիտի համարձակէր բողոքել իր մեծաւորին տուած հրամաններուն, որքան որ ալ այդ հրամանները անտրամաբանական թուէին:

Մարդկութիւնը փրկելու համար նահատակուող Իր Հօրը կամքը կատարելու համար անձնուրացօրէն խաչուող Յիսուս Բրիստոս կ'ըսէ.

Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն և աղօթեցէ՛ք անոնց համար, որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն, որպէսզի ըլլա՛մ որդիները ձեր Հօր, որ երկինքն է. Բանի որ ան իր արեգակը կը ծագեցնէ չարերուն ու բարիներուն վրայ և անձրեւ կը դրկէ արդարներուն ու մեղաւորներուն հաւասարապէս»—Մատթ. Ե. 44-45:

Անհանդուրժելի և դժուարահաճ պատուէրներ են վերոյիշեալ յորդորները, մանաւանդ հայու մը համար, որ ո՛չ միայն Բալած է մահուան շուքի (Մեծ Եղեռնի) անապատին մէջ, այլ սպաննուած ու յօշոտուած է մարդակերպ գազաններէն: Չեմ ջանար նսեմացնել հայուն դէպի վերելք բարձրացնող Գողգոթայի զոհողութիւնները, այլ կը փորձեմ և ճիգ կը թափեմ ըմբռնելու մեր Տիրոջ հրահանգը՝ *“Միրեցէ՛ք ձեր թշնամիները”* պատուէրը: Որովհետեւ կը սիրեմ Ձինքը ու կը վստահի՛մ Իր գերբնական իմաստութեան:

Ուղիղ ըմբռնելու համար մեր Տիրոջ պատուէրը, ըմբռնելու ենք սոյն հրահանգը Անոր ջրջագծէն ներս: Առաջին. - մարդասէր Յիսուս Բրիստոս չ'ըսեր. *“Միրեցէ՛ք ձեր վրայ յարձակող, թալանող և ձեր աղջիկներն ու կիները բռնաբարող թշնամիները»*: Երկրորդ. - Յիսուս Բրիստոս՝ Իրեն աջակերտող հաւատարիմներուն չի հրահանգեր ըսելով.

«Կռապաշտ Յազկերտներու բանակը դիմաւորեցէ՛ք վարդաճիւս մանեակներով և թող տուէ՛ք որ ձեզ ու ձեր զաւակները վերադարձ նեն Մազտէակյան հաւատի՞».

Յիսուս Բրիստոսի ունկնդիր ժողովուրդը՝ (Լեւոն Բարոզը մտիկ ընող Հրէաստանի ժողովուրդը) ինքնապաշտպանութեան գացող բանակի մը

զինուորները չէին: Յիսուս Զրիստոս հրահանգեց՝ *«Միրեցէ՛ք ձեր թշնամիները»*։ Այս պատուէրը յարաբերաբար, աշխարհի փաղափական ամենակայուն ու խաղաղ ժամանակաշրջանին տեղի ունեցաւ։

Յիսուս Զրիստոսի ժամանակակից հրեաներու թշնամիները աւելի *գաղափարակա՛ն* թշնամիներ էին՝ հեղինականութիւնը (յոյն-հռոմէական կրօնահաւատալիքները, որոնց մէջ կը ձուլուէր բազմաթիւ չրեայ նոր սերունդը) և Սամարացիները, որոնք հրեաներու կողմէ ճանչցուած էին որպէս *աղանդաւորներ*՝ իրենց կրօնքը եղծանողները։

Մեծն Աղեփասնդր ու Պոմպէոս զօրավար երբ գրաւեցին չրեաստանը, երբեք հրեաներու հաւատին չդպան և կրօնափոխ ընել չջանացին, այլ միայն հարկատու ըրին զիրենք։

Մասանեան պետութիւնը, Բիւզանդական կայսրութիւնը, Արաբական արշաւանքը և թուրք ասպատակող խուժանը շանացին *հաւատափոխ* ընել հայը, գրաւել անոր ինչքերը և առեւանգել անոր կինն ու զաւակները։ Եթէ կը սխալիմ, կարդացէ՛ք Եէնիչերիներու քանակին ծագումը և անոր կազմակերպութիւնը։ Նոյնպէս անհասկնալի մնացած է հայերու համար, խաչապա՛շտ և "աստուածապա՛կ" ցարերու իրարայաջորդ կտրավարութեանց թշնամական դիրքը չայերու հանդէպ։

Մարդկութեան հանդէպ սէրը կամ *"մարդասիրութիւն"* ը նոր նիւթ մըն է մարդկային փաղափակրթութեան և ժողովուրդներու ըմբռնումին մէջ։

Զրիստոսէ առաջ, *ալէն օտարական*, թշնամի կը սեպուէր։ Ընկերասիրութիւնը չէր անցներ փաղափ մը պարիսպներէն դուրս։ Մարդասիրութեան գաղափարը՝ սովահար երկիրներու ուսելիք հասցրնելը և բարեգործական համաշխարհային հեռանկարը, խորհուրդն ու մտայղացումն է Յիսուս Զրիստոսի, որ կը գտնուի "Միրեցէ՛ք ձեր թշնամիները" հրահանգին մէջ։

Յառաջդիմական և մարդասիրական գաղափարներու և իրողութիւններու ընդհանուր յեղաշրջում մը ստեղծեց Յիսուս և զօրացուց ազատագրական շարժումը, թէ՛ *հոգիի* և թէ՛ *մարմնի*։

Այո, մարդ արարած կը կտրավարուի սուրով, իսկ գաղափարով ան կը փաղափակրթուի ու հետեւելով աստուածառափ՝ Վարդապետին ան կը դառնայ *"Նոր Մարդ"*՝ սուրբ նման Մարիամ Մագդաղենացիին ու մարդասէր՝ Զակէոսին։

Մարդկային յարաբերութեան մէջ անկիւնադարձ կերտող Յիսուս չ'ըսաւ երբեք. *«Միրեցէ՛ք ձեր երկիրը ասպատակող և ձեզ հաւատափոխ ընող բարբարոս ազգերը»*։ Աստուածայայտնիչ Վարդապետ Յիսուս չ'ըսաւ. *«Միրեցէ՛ք ներդուժող վայրագ արշաւազօրէ՛րը»*։ Յիսուս Զրիստոս խօսեցաւ *անհատի՛ն* և անհատական նախաձեռնութեան մասին։ Մեր Տէրը հոնտորական կամ փաղափական ճառախօսութիւն չ'ըրաւ չորմի խորհրդարանին մէջ նման Սենեկայի և Կեսարի։ Նագովրեցի Զարոգիչը փաղափային իշխանութեան աշխարհային գաղափարաբանութեամբ չգբաղեցաւ, այլ շանաց *անհա՛տը*։

փոխակերպել դէպի բարին, դէպի մարդասերը և դէպի սուրբը:

Յիսուս Բրիստոսի աստուածային խօսքերը և անոնց ամբողջութիւնը երբ սերտենք, չենք կրնար անտեսել Անոր *մահապատիժի* վերաբերեալ խիստ ակնարկութիւնները կամ պատերազմի համար առնուելիք նախագգուշութիւնները: Յաղթական Յարութենէն յետոյ երբ Յիսուս Բրիստոս ուղարկեց Իր առաքեալները աշխարհ, որ քարոզեն և ուսուցանեն Իր *տիեզերական* կեանքի ճշմարտութիւնները և ճամբան, պատուիրեց անոնց ըսելով.

***«Առըվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը,
ինչ որ պատուիրեցի ձեզի»--Մատթ. ԻԸ. 20:***

Աշակերտներուն առաքելութիւնը ո՛չ թէ իրենց Յարուցեալ Տիրոջ *հանդիմել* ճշմարտանման գաղափարները տարածել և ուսուցանել էր, այլ կեանքի բոլոր ոլորտները թափանցող Բրիստոս յայտնապէս պատուիրեց Իր հաւատարիմներուն, որ քարոզեն և ուսուցանեն Իր ***բոլոր*** պատուերները:

"Պատուէր" բառը սոյն համարին մէջ իր յուն. բնագրական իմաստով *հրամայել* կը նշանակէ, այլ խօսքով վճռաբեկ ասեանի *վճիռ*: Մշտաջող Բրիստոս ոչ միայն չի՛ խնդրեր, չի՛ հայցեր կամ խնդրանք չի՛ ներկայացներ Իր աշակերտներուն, որ տարածեն Իր ճառագայթող յաւերժաբոյր ճշմարտութիւնները, այլ կը *հրամայէ*, որ պահեն ***բոլոր*** պատուերները: Ոչ միայն այն պատուերները, որոնք հաճելի կը թուին, այլ առաւել անոնք, որոնք ենթակայէն պիտի պահանջեն գերագոյն գոհողութիւն՝ ուրանալ անձը և առնել խաչը ու հետեւիլ Վարդապետին:

Եկեղեցիներ, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ քեկքեկուած են, որովհետեւ իւրաքանչիւր յարանուանութիւն, փոխանակ հմտանալու Բրիստոսի ***բոլոր*** պատուերներուն, կը քարոզէ ու կ'ուսուցանէ իր *նախասիրածը*, իր երկրին հաշւոյն յարմարածը, իր անդամներուն *հաճելի* երեսցած պատուերները և վարդապետութիւնները: Ներկայ եկեղեցիներու մեծ դժբախտութիւնը այն է, որ քարոզիչներ ***տո՛ւնց աշակերտելու*** Յիսուս Բրիստոսի, կը քարոզեն ու կ'ուսուցանեն ա՛յն ինչ որ աստուածաբան տիտղոսակիրներ յարմար սեպած են: Որպէս ապացոյց յիշեցէ՛ք Գերմանիոյ եկեղեցիները, որոնք թե՛եցան Հիթլերեան գաղափարաբանութեան՝ համաշխարհային երկրորդ Պատերազմին:

"Թշնամի" բառին մասին Յիսուս Բրիստոս միայն *«Արընցէ՛ք ձեր թշնամիները»* չէ ըսած: Ան "Թշնամիներու" մասին յաւելեալ ակնարկութիւններ ալ ըրած է: Բրիստոս՝ Իր ճշմարտաբոյր ապրումէն հորիզոն մը բացաւ, որ կը յստակացնէ և մարդկային տրամաբանութեան ու ազգային հարցերու կնճռոտ հարցերը կը լուսաւորէ ու կ'իմաստաւորէ:

Մարդեղութեան փրկարար Զօրութիւն Բրիստոսի խօսքերը պէտք չէ մեկուսացուին իրարմէ, այլ անոնք գոյութիւն ունենալու են յարաբերութիւն-

ներու համակարգով: Զարդիչ մը կամ Աստուածաշունչ վարդապետող մը համակարգելու է Բրիստոսի տուած պատճառաբանութիւնները և մեկնաբանելու է զանոնք *համադրեալ* նշանակութեամբ: Արուեստն իսկ մտքի և հոգիի նուրբ ու ազնիւ բազմերանգ երեւակայութիւններուն ու ապրումներուն համադրոյթն է:

Տեսնենք թէ յաւերժաւանդ խորհուրդ Յիսուս ի՞նչ կ'ըսէ պատերազմի, մահապատիժի, թշնամիներու, և սուր վերցնելու մասին: Բացաձակապէս ներելի չէ՛՝ ոեւէ հաւատացեալի մը, Բրիստոսի աշակերտողի մը և վարդապետողի մը համար ըլլալ Բմահաճ և միայն ի՛ր հաշույն եկած մէջբերումները ընել ու վերագրել զանոնք մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի:

1. *Պատերազմի* մասին գերագոյն Իրականութիւն Բրիստոս կ'ըսէ.
«Ո՛ր թագաւորը, եթէ պատերազմելու երթայ ուրիշ թագաւորի մը դէմ, նախ չի նստիր և չի խորհիր թէ տասը հազարով կրնա՞յ դիմադրել անոր, որ Բսան հազարով կու գայ իր վրայ: Ապա թէ ոչ, մինչ ան դեռ հեռու է, պատգամաւորութիւն դրկելով՝ խաղաղութիւն կը խնդրէ» --Ղուկ. ԺԴ. 31-32:

Իսոսքի և գաղափարի Զօրութիւն Բրիստոս երբ կ'արտայայտուի պատերազմի մասին, Ան չ'արտայայտուիր որպէս *նախայարձակ ու գաղթատիրութիւն* կերտող բարբարոսի մը մասին, այլ *ինձնապաշտպանութիւն* փորձող իր *հաւատքի* ու արեւակիցները *պաշտպանող* թագաւորի մը մասին կը խօսի Ան: Ուշադրութեամբ կարդանք Յիսուս Բրիստոսի իմաստուն խօսքերը. *«որ Բսան հազարով կու գայ իր վրայ»*: Խաղաղութեան Իշխան Յիսուս, "տասը հազարով" պատերազմի գացողը կը ներկայացնէ որպէս *ինձնապաշտպանութեան* ազատամարտիկը: Ապա թէ ոչ խաղաղութեան Իշխանը պատերազմի *կոչ* պիտի չ'ընէր:

Որպէս Հայ Բրիստոսներ, Աւարայրի ճակատամարտը շփոթելու չե՛նք Արեւմտեան հզօր պետութիւններու անխիղճ գաղթատիրական պատերազմներուն հետ երբ 1830-ին Ֆրանսական կառավարութիւնը բանակ մը ցամաքահանում ընելով գրաւեց Ալճերիան, այն պատրուակով, որ Ալճերիայի բարձրագոյն պետը անարգած էր Ֆրանսայի դեսպանը... : Անգլիա և Ֆրանսա, իրենց ջահերէն տարուած, իրենց հոգատարութիւնը *պարտադրեցին* Արաբներուն վրայ: Բունատիրական պարտադրութեամբ Մեծն Բրիտանիա գաղթատիրութիւններ հաստատեց Հնդկաստանի և Ափրիկէի մէջ: Եւրոպական պատերազմներուն և ո՛չ մէկը *ինձնապաշտպանութեան* կամ *հաւատքի* ազատութեան համար գործուեցաւ, այլ *ազանութեամբ*: յաւելեալ *հարստութեան* տիրանալու համար:

Հայ դիւցազուններ, առանց բացառութեան, Տրդատ թագաւորէն ասդին կրուեցան ու մեռան ո՛չ թէ նուաճողական նպատակներու համար, այլ

հաւատի՛ր, ինքնապաշտպանութեան և ազատօրէն զԱստուած պաշտելու համար:

2. Մահազատիժ: Ի՞նչ կը կարդանք Աւետարաններու մէջ *մահապատիժի* նկատմամբ:

ա. *«Արիջներ ալ բռնեցին անոր ծառաները, անպատուեցին ու սպաննեցին: Իսկ թագաւորը, երբ լսեց, բարկացաւ և իր զօրքը դրկեց ու բնաջնջեց սպաննողները և այրեց անոնց բաղաճը»* --Մատթ. ԻԲ. 6-7:

բ. *Վերջին Դատաստանին* --«Այն ատեն ան պիտի ըսէ իր ձախ կողմը եղողներուն. «Անիծեալներ, հեռացէ՛ք ինձմէ դէպի յաիտենական կրակը, որ պատրաստուած է Մատանային և իր հրեջտակներուն համար»--Մատթ. ԻԵ. 41:

գ. *«Բայց իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ ես թագաւորեմ իրենց վրայ, այստեղ բերէ՛ք և սպաննեցէ՛ք իմ առջեւ»* --Ղուկ. ԺԹ. 27:

դ. *«Եւ անոնց (չարերուն) թիւը ծովու աւազին չափ է. անոնք պիտի ելլեն երկրի ամբողջ լայնութեան վրայ և պիտի ջրջապատեն սուրբերու բանակներն ու սիրելի բաղաճը: Եւ երկինքէն, Աստուծմէ կրակ պիտի իջնէ ու պիտի լափէ զանոնք և անոնց զօրագլուխը Մատանան, որ մոլորեցուց զանոնք. ան պիտի նեւէ զանոնք կրակի և ծծումբի լիճին մէջ, ուր կը գտնուէր գազանը, ինչպէս նաեւ սուս մարգարէն»* --Յայտ. Ի. 8-10:

«Իսկ գալով ծոյլերուն և (աստուածային տաղանդը չգործածողներուն) ու անհաւատներուն, ոճրագործներուն և պոռնիկներուն, կախարդներուն և կռապաշտներուն, հմայողներուն և բոլոր ստախոսներուն՝ ամբարիջտներուն, անոնց բաժինը ծծումբով և կրակով այրող լիճին մէջ է՝ որ երկրորդ մահն է» --Յայտ. ԻԱ. 8

Արջալոյսի պէս Բնիւշ Յիսուս, բացայայտեց երկնաւոր Հօր սերը, ողորմածութիւնն ու երկայնամտութիւնը հանդէպ մարդ արարածին, ո՛չ որովհետեւ Աստուած միամիտ, դիւրահաճ (naive) և վճռականութիւն չունեցող Արարիչ է, այլ՝ *«Աստուած ուզեց ցուցնել իր բարկութիւնը և յայտնի դարձնել իր զօրութիւնը, ան որ մեծ համբերատարութեամբ համբերութիւն ցուց տուաւ կորստեան համար պատրաստուած բարկութեան անօթներուն հանդէպ, որպէսզի յայտնի դարձնէ իր փառքին հարստութիւնը ողորմութեան անօթներուն վրայ զոր պատրաստեց փառքին համար»* --Հռոմ. Թ. 22-23:

Հայաստան աշխարհ նահատակներու՝ երկիր է, սուրբերու աղօթքով թաթաւուած և մարտիրոսներու արեամբ ոռոգուած: Եթէ կը կարծուի, թէ մեր անգերեզման նահատակները մեռան ու կորան, այդ կարծիքը ո՛չ միայն անհաւատութիւն է, այլ *անհտութիւն* և անտրամաբանութիւն: Բրիստոնէլու-

թիւնը հարուստ է *գիտակցակա՛ն* նահատակութիւններու հերոսական օրինակներով: Իր թիւին համեմատութեամբ, հայութիւնը առաւելագոյն նահատակութիւնը սուած է:

Աստուած, որքան որ սէր է, ողորմածութիւն և գթութիւն, Անոր արդարութիւնն ու իրաւունքը նոյնքան ալ սուր է ու վճռական: Մեր սուրբերն ու նահատակները հերոսաբար, յոյսով ու հաւատով քաջացին հայ Գողգոթայի խաչելութեան և նահատակութեան առաջնորդող ճամբայէն: Վարդանի նահատակութեամբ Աւարայրի ճակատամարտը չէ՛ վերջացած: Անոնց՝ 1036 մարտիրոսներուն վրայ աւելցած են հազարաւորներ, որոնք Յարութեան Առաւօտուն պիտի լսեն կենդանացնող կարգախօսը իրենց Տիրոջ որ պիտի որոտայ ու թնդայ:

***«Ձեր դարաւոր ջիրիմներէն վե՛ր կացէ՛ք,
ազատութեան նահատակներ»:***

3. Ժամանակաւորը յաւիտենականին հետ կամրջող Յիսուսի խօսքերն ու պատուերները ո՛չ պարզ են ու ոչ ալ կնճոտ, այլ *խորաբննիկ*: Պատճա՞որ: Որպէսզի Մատանան՝ ճշմարտութեան հակառակորդը, իր բոլոր խորամանկութիւնովն ու ամբարտաւանութեամբ ջիւթի ու իր ռազմավարութեան մէջ ձախողի: Աստուած Իր Սուրբ Հոգիով կրնայ բացատրել՝ Իր Միածին Որդւոյն յայտնութիւնները, աղերսող հաւատարիմ ծառաներուն:

Նագովրեցի Մարգարէն Իր մատնութենէն քանի մը ժամ առաջ կ'արձակէ երկու հակադրական կարծուած պատուերներ.

ա. Յիսուս ըսաւ անոնց. ***«Երբ ձեզ դրկեցի առանց քսակի, մախաղի և կօշիկներու, միթէ՞ ոնէ՞ քանի կարօտ մնացի՞ք»:*** Եւ անոնք ըսին. ***«Եւ ոչ մէկ քանի»:*** Ապա ըսաւ. ***«Իսկ հիմա ով որ քսակ ունի՝ թող առնէ. նոյնպէս և՛ մախաղ. իսկ ով որ չունի՝ թող ծախէ իր զգեստները և իրեն համար սուր գնէ»***--Ղուկ. ԻԲ. 35-36:

բ. Եւ անա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկարեց և իր սուրբ հանեց ու հարուածեց քահանայապետի ծառային և կտրեց անոր ականջը: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. ***«Ընու սուրդ ետ իր տեղը դիր, որովհետեւ անոնք որ սուր կ'առնեն՝ սուրով պիտի իյնան»***--Մատթ. ԻԶ. 51-52:

Երբ քննադատելու մտքով կամ հպանցիկ ակնարկով դիտենք Յիսուս Զրիստոսի գոյգ հրահանգները, անոնք այնպէս կը թուին մեզի, թէ Ան ջիւթութեան մէջ է, կամ գաղափարական հակադրութեան:

Հայ ազգային դրօշը հակադրութիւն մըն էր մինչեւ վերջերս, իսկ այսօր ան դադրեցաւ մտածողական ներհակութիւն ըլլալէ ու դարձաւ համայն հայութեան հպարտանքը: Նոյնպէս ալ մեր Փրկչին վերոյիշեալ երկու հակադիր կարծուած պատուերները իրար կը լրացնեն, եթէ թափանցենք սոյն պատուերներուն խորքը:

Մարդկային ողբերգութեան տրաման ապրող Յիսուսի, առաջին

պատուէրն էր. «*Թող ծայտէ զգնեստները և իրեն համար սուր գնէ:*» Ինչո՞ւ: Որպէսզի զինուած ըլլայ, ոչ թէ գործածելու համար, այլ միայն *ի հարկին:* Լուսեղէն Յիսուսի երկրորդ պատուէրն էր, Գեղսեմանիի պարտեզին մէջ. «*Ընսուրդ ետ իր տեղը դիր, որովհետեւ անոնք որ սուր կ'առնեն՝ սուրով պիտի իյնան:*» Մեր Տէրը չի՛ պատուիրեր որ սուր *չվերցնեն:* Ան սուր գործածելը չ'արգիլեր, այլ *հետեւա՛նքը* կը նախաձայնէ՝ «*սուրով պիտի իյնան:*» ըսելով:

Այլ խօսքով, եթէ կ'ուզես պաշտպանել հաւատոյ և ընտանիքդ սուրով, մի՛ ակնկալէր, որ բու արդար կոխիդ համար դուն *անպարտեղի* պիտի ըլլաս: Մի՛ կարծէր որ հաւատքի պատերազմին մէջ դուն պիտի *չվնասուիս:* Եթէ Հայրենիքի և հաւատքի ինքնապաշտպանութիւն պիտի փորձես, գիտցած եղիր, որ կրնաս դո՛ւն ալ սպաննուիլ: Այս աշխարհի իշխանութեան շրջանին, ես իրաւունք չունիմ՝ քեզ պաշտպանելու, եթէ սուր վերցնես: Եթէ մեռնիլ յանձն կ'առնես, կրնաս սուր վերցնել...:

Ոչ որովհետեւ Սատանան ակելի հզօր է Աստուծմէ, այլ այս աշխարհը ներկայիս Սատանայի իշխանութեան ներքեւ է: Օրինակ, Միթէ Իրանի Այաթոլլա բռնատէրը Ամերիկեան պետութենէն ակելի՞ զօրաւոր էր, որ Միացեալ Նահանգները չկրցան ազատագրել իրենց դեսպանատան առեւանգըւած պաշտօնեաները: Ո՛չ, այլ Միջազգային Օրէնքներ կան, որոնք պարտ էին յարգուիլ:

Յիսուս Զրիստոսի ժամանակակից հրեայ ժողովուրդի ենթագիտակցութեան մէջ, Դանիէլ մարգարէն ու իր երեք ընկերները՝ Սեդրաք, Միսաք և Աբեղնագովի մահուանէ զերծ ըլլալը խոր ազդեցութիւն գործած էր, մանաւանդ ծայրայեղ հրեայ ազգայնականներու մտքին վրայ:

Երբ համակարգենք սրուած պատճառաբանութիւնները և արտաբերենք անոնց *համադրակա՛ն* նշանակութիւնը, մենք զմեզ մօտեցած կը զգանք մեր Տիրոջ պատուէրներու *իմաստին* և անստուեր Լոյս Յիսուսի մէջ կ'անհետանան հակադրութիւնները: Ներհակ և իրերամերժ կարծուած գաղափարներն ու պատուէրները կը դառնան իրար լրացուցիչ ու կը մասնակցին ու կը գեղեցկացնեն հարստացնելու ըմբռնումի ճանապարհը: Մարդկային հոգին բարդ է, անոր ըմբռնումներու, ապրումներու ձեւերն ու կերպերը բազմակողմանի են: Անոնց իւրաքանչիւրը իր արտայայտութեան և հասկացողութեան լեզուն և առանձնայատկութիւնները ունի: Հաւատացեալի մը ըմբռնումը պարտի գոյանալ գիրին և գիրէն անդին:

հոգեկա՛ն բխումներու ճամբով:

Յուլիս 13, 1994

Հալիպըրթըն, Օնթարիոյ

ՍԻՐՈՅ ՀԻՐԱՊՈՅՐԸ

«Սիրոյ հրապոյր» բառերը անբաժանելիօրէն զուգորդուած են: Ձեռն կրնար «սէր» բառը գործածել առանց «հրապոյր» բառին: Ինչպէ՞ս կարելի է սիրել առանց հրապուրուելու, կամ հրապուրուիլ և չ՛սիրել:

Սիրոյ հրապոյրը՝ տիեզերքի սկզբնապատճառը կարելի է կոչել: Սէրը իր գոյութիւնը կ'արտայայտէ ոչ միայն հոգեկան և իմացական տարածութեան մէջ, այլ նոյնիսկ բնութեան ամենայետին բջիջին և հիւլէին մէջ ալ: Տարրալուծարանի մէջ երբ հիւլէները տաֆնան՝ իրարու կը մօտենան, կը ջանան իրարու մէջ միաձուլուիլ: Այս ձգողական գործառնութեամբ մետաղները կը հալին և կը կազմեն ձուլածոյ ամբողջութիւն մը:

«Սէր»ը՝ իր նախնական և բնական կացութեան մէջ կարելի է անուանել «ձգտում» կամ մղում մը: Սոյն «ձգտում»ն ու մղումը եթէ կ'ուզենք «սէր» անուանել, պարտաւոր ենք սոյն ձգտումին կցել «իմացականութիւն և գիտակցութիւն»: Ինչպէս նախակրթարանի ուսանող մը չի կրնար համալսարան մտնել առանց վկայականի, նոյնպէս «ձգտում» մը կամ մղում մը առանց իմացական և զգացողական գիտակցութեան չի կրնար բարձրանալ մարդկային «սիրոյ» ճանաչողութեան:

Ի՞նչ է սէրը:

Ինչպէ՞ս բնորոշել «սիրոյ հրապոյր»ը կամ սիրելիութիւնը: Որքա՞ն կը հասկնանք սիրոյ խորհրդագագաց իսկութիւնը: Հոգեկա՞ն և բարոյակա՞ն տպաւորութիւններու զգայնութիւնն է, թէ մարմնական և նիւթական, թէ երկուքին համադրական զգայնութիւնը: Զգացո՞ւմ է, թէ փորձառական գիտակցութիւն: Խորհո՞ւրդ է, թէ իրողութիւն: Պատահական ճշմարիտ եղելութի՞ւն մըն է, թէ երազանք կամ քննադէպ երեւակայութիւն:

Վիպասաններո՞ւ մտայղացում է, թէ հանճարեղ երաժիշտներու երեւակայութիւնը այնպէս ինչպէս Թրիսթան և Իզոլտա, կամ Տայ Վալֆիւրի որոնք թատերական հոյակապ գլուխ գործոցներ են: Թէեւ ողբերգական, սակայն մարդկային հոգիները յուզող և զանոնք իրենց թմբիրէն սթափեցնող և ջարժող դիւցազներգութիւններ: Նոյնիսկ եթէ մտայղացումներ ըլլան անոնք, վերոյիջեալ դիւցազներգութիւնները, ճանչնալու ենք որպէս *ցոլացումները*՝ ճշմարտութեան և իրողութեան:

Սէրը այնքա՞ն մեծ է, հզօր, վսեմ և հմայագեղ որ աւետարանաշունչ առաքեալը կը համարձակի զԱստուած կոչել **ՍԷՐ**: Բացի Զրիստոնէութենէ, բոլոր մնացեալ կրօնները՝ զԱստուած այնքա՞ն անմատչելի դարձուցած են մարդոց, որ սիրոյ քննադէպ յարաբերութիւնը անհաղորդ կը դառնայ Արարիչի և արարածի միջեւ: Յիսուս՝ զԱստուած մօտեցնելով մարդոց և Ինքզինք կամրջելով անոնց հետ Իր Միջնորդութեամբ, ոչ թէ զԱստուած

նուստացուցած կամ փոքրացուցած եղաւ, այլ՝ մարդը հաշտեցուց իր Արարիչ Աստուծոյն հետ:

Բազմապիսի երեսակներով առարկայ մը, երբ ներկայացուի միայն մէկ երեսակովը որպէս ամբողջութիւն, կը դառնայ անճիշդ և խաբէական: Դժբախտաբար մերօրերուն, սերը կը ներկայացուի հանրութեան որպէս հոլանի մորթ և միս, բնաջնջելով անոր բնեղջ խորհրդապաշտութիւնը որ ակնադբիւրն է իր հրապոյրին և շնորհին:

Այս չի նշանակէր թէ Քրիստոնէական հաւատքը կ'ուրանայ մարմնական կամ սեռային սերը: Ո՛չ երբեք: Հաւատացեալի մը համար ամուսնական խորհուրդը սրբացուցիչ և նուիրական սեր է: Այս նուիրական սուրբ սիրոյ *տեւազումը* և զանցառութիւնը պատճառ կ'ըլլայ անհաւատարմութեան և ամուսնալուծման:

Ընդհանուր տիեզերքի տարածքին՝ մի միայն սերն է որ գործածուելով և սպառելով կը դառնայ անսպառ: Հետեւաբար այն ամուսնները որ կ'ուզեն ցմահ երջանիկ ապրիլ, պարտաւոր են սիրել զիրար: Որովհետեւ այս եզակի և բացառիկ սեր կոչուած իրողութիւնը կը փճանայ, բոլորովին կը հատնի և իր դէրը կատարելէ կը դադրի երբ չի գործածուիր: Որպէս փաստ, բազմաթիւ է այն ամուսնալուծուածներու թիւը որոնք իրար *տեսնե՛լ* անգամ չեն փափակիր:

Միրելը՝ ներգործական "բայ" մըն է, այսինքն գործօ՛ն ըլլալ և ոչ կրաւորական կեցութիւն:

Քրիստոնէական հաւատքի մէջ՝ որ է Յիսուսի ապրումը, սերը նկարագրուած է որպէս հոգեկան անձնուրացութիւն և սպասաւորութիւն, որուն ակնադբիւրն է Ի՛նքն Աստուած Իր անյիջաչար սիրոյ ներողամըտութեամբ հանդէպ համայն մարդկութեան: Աստուածային սերը անսպառ դարձնող զօրոյթը, Աստուծոյ սիրոյն *շարունակական* սպառումն է հանդէպ մարդաշխարհի՝ *բեզի՛ և ինծի՛*:

Փետրուար 10, 1990

Թորոնթօ

ՍԻՐՈՅՑ ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

Կան մարդիկ, որոնք կը տրամաբանեն վախի՝ պատճառաւ, ուրիշներ՝ ազահութեան և անձնասիրական շարժառիթներով: Ընչաւոր կենդանիներն անգամ կը տրամաբանեն, սակայն սահմանափակ չափով: Ծուն մը երբ կը զանազանէ իր տէրը՝ թշնամիէ մը, գործածած կ'ըլլայ *ի՛նչ* տրամաբանութիւնը: Սակայն շուն մը չի կրնար իր տրամաբանութեամբ զանազանել *բարոյակա՛ն* առաքինութիւնը, գոեհիկ կենցաղավարութենէ: Ընտանիքի մը ջատ սիրելի շունը՝ չի կրնար զանազանել գեղեցիկը սգեղէն:

Ուստի, ի՞նչ է տրամաբանութիւնը:

Տրամաբանութիւնը՝ ուղիղ դատելու հոգեկա՛ն կարողութիւնն է: Տրամաբանութիւնը ուղիղ մտածելու, արդարութիւնը և բարին հետազօտելու գիտարուեստն է:

Մարդկային տրամաբանութեան ասպարէզը այնքան տարածուն է, որ այս գրութեամբ կը փափաքինք բաւարարել մենք զմեզ միայն *"Միրոյ՛յ Տրամաբանութեամբ"*:

Ինչո՞ւ "Միրոյ Տրամաբանութիւն"ը:

Մարդ-արարած որքան որ տենչացող մըն է հոգեկանին և աննիւթականին, հոն հասնելու յոգնութիւնը չո՛ւղկէր ստանձնել: Այլ խօսքով, բազմաթիւ անուանեալ "Քրիստոնեաներ", կը պաշտպանեն եկեղեցին, նոյնիսկ նուիրատուութիւններ կ'ընեն, սակայն չեն յաճախեր եկեղեցի: Ծատ մը "հաւատացեալներ" կը փառաբանեն զԱստուած, սակայն չե՛ն հաւատար Աստուծոյ...:

Որովհետեւ տրամաբանութիւնը **հոգեկա՛ն** կարողութիւն է, չի կրնար լման գործել եթէ ազահութիւնն ու անձնապաշտութիւնը ապականեն հոգիին սրբութիւնը: Մարդ-արարած յարատեւօրէն ներշնչումի արբեցութեան ներքեւ չ'ապրիր, ու ոչ ալ շարունակ "Պայծառակերպութեան" յափշտակիչ լերան կատարը կը բնակի: Մարդ՝ բնականէն հողաշէն է: Ստուեր է մարդ միայն, ան կը ծաղկի, սակայն չի պտղաբերիր: Անոր մղումները աւելի զօրաւոր են քան զգացումները: Աւելի դիւրաւ կը գահավիժի դէպի մեղանչում և կործանում քան թէ կը խոյանայ երկինք:

Մարդ՝ աջխարհի բարձրագոյն տրամաբանող էակն է, սակայն անոր տրամաբանելու զօրութիւնը կ'աղօտի հետեւեալ ախտանշաններէն ազդուած՝

ա. Տգիտութիւն

բ. Անգթութիւն

գ. Ազահութիւն և

դ. Փառամոլութիւն

Վերոյիջեալ սրբապղծութիւններն ու անամբրութիւնները երբ

ապականեն ենթական, այդ անձը, ինքնիրեն համար, բոլոր տրամաբանած ու դատած հարցերը արդար և ուղիղ կը տեսնէ: Արովհետեւ իր տրամաբանութեան պրիսմակը վերոյիջեալ չորս դիտանկիւններէն կ'առաջնորդուի:

Հաւատուրաց կրօնաւորները երբ խաչեցին Յիսուս Քրիստոսը, ոչ թէ միայն զղջման չեկան, այլ՝ ըստ իրենց տրամաբանութեան՝ արդարութիւնը գործադրած եղան: Անոնց տրամաբանութիւնը Օրէնքի տառէն և իրենց փառամոլութեան դիտանկիւնէն կը սեւեռէր:

Ինչո՞ւ աշխարհի մէջ ընդհանրացած է ամուսնալուծումը: Ինչպէ՞ս երկու սիրավառ սրտեր, փոխանակ սիրելու զիրար, կը սկսին ատել զիրար: Երբ անցեալին՝ չէին ուզեր իրարմէ բաժնուիլ, այսօր իրարու աչքի՛ն անգամ չեն ուզեր նայիլ: Ոչ թէ տրամաբանութիւն չունին, այլ իրենց տրամաբանելու զգայարանքը ապականած է: Անձնասիրութիւնն ու «ես»ի բմահաճոյքը պղտորած են իրենց դատողութիւնը:

Ինչո՞ւ նորաբողբոջ ազգեր, Ափրիկէի ցամաքամասին, զոհ գացած են ըմբոստութեան և ապստամբութեան:

Վերոյիջեալ ազգերը ոչ թէ ազգատէր չեն, այլ ազգասիրութիւնն ու ծայրայեղ անձնասիրութիւնը իրարու հետ կը շփոթեն: Անոնք կ'ուզեն ծառայել ազգին, բայց նախ կ'ստիպեն որ ազգը *հպատակի՛* իրենց, կը ջանան փրկել ազգը, զայն կոտորելով և գերեվարելով: Հետեւանքը կ'ըլլայ սով, հիւանդութիւն և մահ: Այս պատճառաւ սովը միահեծան կը սիրապետէ Ափրիկէի մէջ:

Միրոյ տրամաբանութիւնը չի ***գարատորէր*** իր կամքը, այլ՝ կը ***մատուցանէ՝ ինքզինքը***: Միրոյ ամենացայտուն դիմագիծը ակնայայտ է Գողգոթայի Խաչեցեալին նայուածքին մէջ: Քրիստոսի չարչարակոծ դէմքը, սիրոյ մագնիսական ալիքներ կը ցայտէ համայն աշխարհի և մարդկութեան: Միրոյ տրամաբանութեամբ, անձ մը իր կամքը չի՝ *բռնանայ*: ուրիշի, այլ՝ ինքզինք *կ'ընծայէ՛* անոր:

Ատելութեամբ ապականած տրամաբանութիւնը, մայրն է բոլոր չարիքներու, որոնք կը տեսնենք ու կը լսենք ամէն օր: Միրոյ տրամաբանութիւնը ակնաղբիւրն է բոլոր բարիքներու, հոգեկան գոհացումներու ու ներդաշնակ ապրումի:

Մի՛ խրատե՛ք անձ մը տրամաբանելու երբ անոր հոգին պղտորած է ատելութեամբ: Հոգին այն վառելանիւթն է որ շարժման մէջ կը դնէ տրամաբանութիւնը:

Տրամաբանութիւնը շարժող մղիչ զօրութիւնը, պէտք է հոսի սիրո՛յ գոհաբերական անձնուրացութենէն: Հոն ուր պարտադրա՛նք կայ, հոն ուր ճնշում կայ, հոն ուր ստիպում կայ, տրամաբանութիւնը չի կրնար գործել ազատօրէն:

Հոգին ձեւ կամ չափ չ'ունի: Ան կ'ապրի ազատութեան, ու

երկնակամարի միջոցին մէջ կը ճախրէ ամպանման երեւոյթներով: Նիւթին կրնաս տալ ձեւ, չափ և կշիռ, բայց ոչ երբեք հոգիին: Անասունները կրնաս պարտադրել բու կամֆիդ: Տալ անոնց ձեւ և չափ, բայց ոչ մարդ արարածին: Մարդ՝ կաւաջէն է, այո, սակայն շաղախուած է ու դարձած հոգիի ու հողի բաղադրութիւն:

Կրնաս մարդը գերեզմարել, սակայն չես կրնար պարտադրել որ ան սիրէ՝ Բեգ: Կրնաս նոյնիսկ սպաննել զայն, սակայն չես կրնար կալանաւորել իր հոգին: Զայն մի միայն կրնաս **սիրաջառնիլ**: Առինքննել զայն բու սիրովդ, և ի վերջոյ նոյնանալ անոր հետ բու անձնագոհութեամբդ: Յիսուս Քրիստոս չի պարտադրեց Սողոս Փարիսեցին, որ ան դառնայ Իր առաքեալը: Մեր Տէրը սիրոյ հրապոյրով շահեցաւ Պօղոսը ու վերածեց զայն Պօղոս առաքեալի: Հետեւեալը բիւրեղացեալ Միրոյ տրամաբանութիւնն է.

*«Եթէ խօսիմ մարդոց և հրեշտակներու ն լեզուները,
բայց սէր չունենամ, կը նմանիմ պղինձի մը՝ որ կը
հնչէ կամ ծնծղաներու՝ որ կը դողանջեն: Եթէ
մարգարէութիւն քննելու ջնդրի ու նենամ և հասկնամ
բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ
եթէ ու նենամ ամբողջ հաւատքը՝ մինչեւ իսկ
լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ՝
ոչինչ եմ»--Պօղոս առաքեալ:--Ա. Կորնթ. ԺԳ. 1-2:*

Դեկտ. 31, 1990
Թորոնթօ

ՅԻՍՈՒՍ ԻՆՉ ԿԸ ՊԱՅԱՆՋԷ ԻՐ ՀԵՏԵՒՈՐԳՆԵՐԷՆ ՀԱՒԱՎՏՔ ԹԷ ՍԷՐ

Յաճախ իմացած ենք շատերէ թէ իրենք հաւատացեալներ են, ապաշխարած են ու վերստին ծնած (born again) քրիստոնեաներ կամ "չոգին ստացած" ու զանազան լեզուներ խօսած հաւատացեալներ: Վերոյիջեալ բոլոր ասութիւններն ալ շատ բարի ոճաբանական ասացուածքներ են:

Յիսուսի անարժան աշակերտի մը համեստ հարցումն է, թէ ինչո՞ւ համար իրենք զիրենք քրիստոնեայ, ուղղափառ և հաւատացեալ դաւանողներ և կրօնողներ, չեն կրցած հաւաքակա՛ն միասնականութեամբ գործել ու գործակցիլ իրարու հետ: Ինչո՞ւ իրենց հաւատքը (որ կը վկայեն համարձակօրէն) չէ կրցած զիրենք միացնել իրարու:

Ինչո՞ւ Յիսուս Զրիստոսի հաւատացող պատմակա՛ն Եկեղեցիներ ու նորելուկ Յիսուսի հաւատացողներ, կարգ մը դաւանական կամ ոճաբանական պատճառներով իրենց գործընթացքը կը սեփականացնեն և իրարու անհաղորդ կը մնան ու մանաւանդ իրարու հետ չեն գործակցիր:

Ինչո՞ւ համար դաւանանքը կամ հաւատալը բաժնած է Եկեղեցիները, և յարանուանութիւնները իրարմէ փոխանակ զանոնք միացնելու: Ձե՞ որ բոլոր քրիստոնեաներն ալ կը հաւատան նո՛յն Յիսուս Զրիստոսի ու կ'աղօթեն նոյն Երկնաւոր Հօր Աստուծոյ:

Մինչեւ Չորրորդ դար, Զրիստոնէական Եկեղեցիներ բոլորը միացած էին թէև ունէին մի քիչ տարբեր դաւանանքներ, որոնք ոճաբանական և իմաստասիրական տարբերութիւններ էին, սակայն վերոյիջեալ դաւանանքները չէին **օրինականացած**: Ներկայի բոլոր եկեղեցիները և յարանուանական բեկանուած հաւատացեալներ, ակամայ կը պատկանին Չորրորդ դարէն սկսուած անսեր դաւանական պայքարամարտի իմաստասիրութեան: Բացատրեմ մտածումներս:

Մեր Տէրը Յիսուս ըսաւ Յովհաննու Աետարանին ԺՂ. 1-ին մէջ.

«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաև Ինծի»:

Յիսուս չըսեր հաւատացէ՛ք **դաւանանքի՛** մը, այլ Ան կ'ըսէ. **«Ինծի՛»**, ո՛չ թէ **գրութեա՛ն** մը, այլ **Անձնաւորութիւն** եղած Մարդեղինացած Աստուածորդիին: Հաւատացեալներ երբ ապրո՞ղ ու ա՛պրեցնող գորութեան Տէր Յիսուսի Անձը կը մոռնան ու զայն կը փոխանակեն գրաւոր դաւանանքով մը, ա՛յն ատեն մենք պաշտած կ'ըլլանք **գրութի՛ւն** մը փոխանակ պաշտելու **Գեր-Անձնաւորութիւն** մը, Արարիչ մը, Փրկիչ մը, Հօր Աստուած մը, որուն ամենափայլուն հանգամանքը **ՍԷ՛ՐՆ** է, անձնագործութիւնն է ու մանաւանդ հանդուրժողութիւնն է: Յիսուսի պատուէրը Իրեն հետեւողներուն եղած է.

«Դու՛ք ձեռ մէ՛ջ ունեցէ՛ք աղը և իրարու հետ խաղաղ եղէ՛ք»

Մարկ. Թ. 49:

Կրօնական այս հաւատքը, ամէն քրիստոնեայի մօտ հաւասար ուժգնութիւնը չունի և հաւասար զօրութեամբ չ'արտայայտուիր. որովհետեւ, ամէն հաւատացեալ միեւնոյն չափով գաղափարական (հաւատքի) ոյժին հասողութիւնը չունի: Դարեր ջարունակ Զրիստոնեաներ կ'ապրին ինքնորոշման, ինքնակազմակերպման, և վերընձիւղման հանգրուանը:

Ի՞նչ է հաւատքի իրականութիւնը--դաւանա՞նք է, եկեղեցւոյ շէ՞նքն է, կազմակերպութի՞ւն է, քարոզութի՞ւն է: Հաւատքը պատմական անցեալի փորձառութիւն մը չէ, այլ հանապազօրեայ ապրում մըն է որ կը կարօտի սերտողութեան ու վերանորոգման: Հաւատքի իրականութիւնը **ոգի՛** է, սիրե՛լ է զԱստուած և մարդ, ապրո՛ւմ է և ծառայութիւն: **Աղօթքի** և **սիրոյ** խեղճին հանդէպ գոյութիւն ունեցող հաւատքին ընդմէջէ՛ն ծնաւ եկեղեցւոյ իրականութիւնը: Աստուծոյ սերը իր ամենաբուռն արտայայտութիւնը և արդիւնաբերութիւնը կը գտնէ երբ հաւատացեալներ միասնաբար կը կարողանան իրարու հանդուրժել և իրարու հետ գործակցիլ:

Զրիստոսի եկեղեցիի մը համար չի կրնար գոյութիւն ունենալ աւելի կարեւոր ինչորև աւելի առաջնակարգ նպատակ՝ քան **միասնական սիրոյ** գոյութեան պահպանումը և սոյն սիրոյ վկայութեան ապահովութիւնը: Կորսուած **սիրոյ միասնականութեան** կը փոխարինէ մրցակցութիւնը, անհանդուրժողութիւնը, զրպարտութիւնը, գայթակղութիւնները ուր սատանան ազատօրէն որով կը ցանէ...

Եկեղեցիին այս պառակտուած ու անազդեցիկ ողբերգութեան առջեւ Յիսուս կու լայ Իր վիշտէն, այնպէս ինչպէս լացաւ Ղազարոսի գերեզմանին առջեւ: Մարդ միայն իր սիրոյ միասնականութեամբ կարող է մնալ հարազատ Զրիստոնեայ: Յիսուսի պատուէրն է.

«Անացէ՛ք իմ մէջս, և ես՝ ձեռ մէջ. ինչպէս ճիւղը որ ինքնօրո՛ւն պտուղ չի կրնար տայ, եթէ հաստատուած չըլլայ որթատու նոյն վրայ, այնպէս ալ դու՛ք եթէ հաստատուած չըլլա՛ք իմ վրաս...Իմ սիրոյս մէջ հաստատո՛ւն մնացէ՛ք: Եթէ պանձ՛ իմ պատուիրաններս՝ իմ սիրոյս մէջ պիտի մնա՛ք. ինչպէս որ ես պահեցի իմ Հօրս պատուիրանները և կը մնամ Անոր սիրոյն մէջ»
--Յով. ԺԵ. 4-10:

Դաւանանքի բառերով կրնանք հաւատքին իմաստասիրակա՛ն բնոյթը բացատրել իսկ ապրումով ու Յիսուսի սիրով կրնանք փոխանցել հաւատքին զօրութիւնն ու անոր հրաջափառ փոխարկումի գործունեութիւնը մեղաւորի մը կեանքին մէջ: Սիրոյ գործօն դերը կ'ազդէ ոչ միայն ջերմ հոգիի ու ծարաւ սրտի, այլ նաեւ ու մանաւանդ սառնակոյտ եղող մտքին: Միայն սէ՛րն է որ ունի առինքնող ու փոխակերպող զօրութիւն: Ազատութեան և ժողովրդավարութեան հիմքը հանդուրժողութիւնն է տարբեր գաղափարաբանութիւններու

նկատմամբ:

Մարդեղինացած Յիսուսի աշակերտներու նախապաշարումը ցայտուն կերպով կ'արձանագրէ Ղուկաս անտարանագիր հետեւեալ կերպով.

*«Վարդապետ, տեսա՞նք մէկը, որ բու անու նովը դէտը կը հանէր,
և արգիլեցի՞նք զայն, որովհետեւ մեզի հետ չէր ջրջեր».*

Ղուկ. Թ. 49

Դեւեր հանողը աղանդաւոր մը չէր, հերետիկոս մը չէր: Ուստի ինչո՞ւ կ'արգիլեն զայն Բարոզելէ և դէտը հանելէ: Պատճա՞ռը,

«Որովհետեւ իրենց հետ չէր ջրջեր»:

Ներմտութեան, նախապաշարումի և հաւատքի սեփականացումին ահաւոր վնասները: Համբուրելի Յիսուսի պատասխանը, Բասն դարերէ ի վեր կ'արձագանգէ ըսելով.

***«Մի՛ արգիլէ՛ք զայն, որովհետեւ ով
որ ձեր թշնամին չէ՝ ձեր կողմն է»:***

Ուրիշ առթիւ, Յիսուս և Իր աշակերտները կ'ուզեն անցնիլ Մամարիայի մէջէն ու երթալ Գալիլիա: Մաքսատան պաշտօնեաներ կը կեցնեն Յիսուս Մարգարէն ու անոր աշակերտները ու կ'ըսեն. «Դուք չըտայ է՛ք և իրաւունք չունի՛ք անցնիլ մեր երկրէն, եթէ կ'ուզէ՛ք Գալիլեայ երթալ, անցէ՛ք Անդրհորդանան ու այդ ճամբով գացէ՛ք: Յովհաննէս ու Յակոբոս աշակերտները, որոնք զօրութիւն և իշխանութիւն ստացած էին իրենց Յիսուս Վարդապետէն, կ'ըսեն Անոր.

***«Տէ՛ր, կ'ուզե՞ս որ ըսենք, և երկինքէն կրակ
իջնէ ու բնաջնջէ զանոնք»:***

Ղուկ. Թ. 54:

Երկնառաք Յիսուս կը նայի Իր ընտրած և վստահելի աշակերտներուն, Իր վիշտէն Աջէերը կ'արցունքոտին, ու դողդոջոյն ձայնով կ'ըսէ անոնց.

***«Ձե՛ք գիտեր թէ՛ ինչ հոգիէ է՛ք դուք. վասնզի մարդու Որդին
չեկաւ մարդոց հոգիները կորստեան մատնելու, այլ՝ փրկելու»:***

Ոչ թէ բանադրողներ և աքսորողներ ըլլալու ենք մեր եղբայրներուն, այլ հասկացողներ և հանդուրժողներ: Հրաշափառ Յարութենէ յետոյ, Յիսուս կը հանդիպի իր աշակերտներուն Գալիլիոյ ջուրին եզերքը, կը պատրաստէ անոնց ուտելիքը: Ու երբ կ'ըտացած են, մէկ կողմ կը հրաւիրէ Պետրոս աշակերտը ու փոխանակ խոստովանանք պահանջելու անոր ուրացումին համար, անոր կ'ուղղէ հարցում մը, ըսելով.

«Սիմո՞ն Յովնանի, կը սիրե՞ս Զիս»:

Նոյն հարցումն է որ Յիսուս կ'ուղղէ մեր իւրաքանչիւրին: Ոչ թէ ի՞նչ է Բու հաւատքը, այլ՝ ***«Կը սիրե՞ս Զիս»:***

Ապրիլ 1, 1998, Թորոնթօ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹԷ ՀԱՒԱՏՔ

Կրօնական դրուժիւնը կամ մտային դիրքորոշումը, մշուշապատ դարերէ ի վեր, ունեցած է ուրոյն վարդապետութիւն և դաւանանք: Սակայն՝ կրօնաւորներ և հաւատքի սպասաւորներ յարատեւօրէն ջփոթած են կրօնքի վարդապետութիւնը հաւատքին հետ: Հաւատալիքի մը կարգն ու կանոնը որքան ալ հարկաւոր ըլլայ, որպէս ուղղադաւանութիւն, պէտք է ջփոթել զայն ենթակային *հաւատքի*, հետ:

Վարդապետութիւն մը, հաւատքի մը կարգն ու կանոնն է, թէ՛ տեսանելի և թէ ճանաչելի: Իսկ կրօնաւէրի մը հաւատքը, ոչ տեսանելի է և ոչ ալ իմանալի երկրորդ անձի մը կողմէ: Հաւատաւորի մը հաւատքը ճանաչելի է մի միայն ա՛յն անձին և իր Աստուծոյն միջեւ:

Կրօնքը՝ Աստուծոյ հետ ապրուած *կեա՛նքն* է, այլ խօսքով՝ կապը: Կրօնքի *վարդապետութիւնը* կարելի է դարձնել գեղարուեստ, բանաստեղծութիւն, բանդակ, իմաստասիրութիւն, նկարչութիւն կամ գրականութիւն, բայց ո՛չ երբեք *հաւատք*: Հաւատքը, հոգեկան զգայուն կապն է, որ կը միացնէ մարդը Աստուծոյ հետ: Բրիստոնէութիւնը ոմանց համար կրօնասիրական ճառ մը կրնայ դառնալ կամ դաւանական (վարդապետական) մարզանք: ...Գործնական Բրիստոնէութիւնը՝ *ապրում* է:

"Հաւատալ" կը նշանակէ նոյնանալ թէ՛ Հաւատացածին և թէ բոլոր հաւատացեալներուն հետ, որոնք կը հաւատան բու հաւատացած Աստուծոյ: Երբ կը հաւատանք Աստուծոյ, վստահած կ'ըլլանք նաեւ անո՛նց, որոնք կը հաւատան Անոր: Հաւատքը կը միաձուլէ և հաղորդ կ'ընէ մարդկային գիտակցութիւնը աստուածային գիտակցութեան հետ: Հաւատքը նախադուռն է երանական լոյսի տեսութեան: Հաւատքը դառնալու է՛ վարդապետութիւն և ոչ ալ դաւանանք, այլ՝ հաւատքը կրնա՛յ վարդապետութիւն ունենալ: Հաւատքը այն ոգեկան մղումն է, որ արարքներու կողմէ տեղի կու տայ հաւատացեալին կողմէ, որուն միջոցաւ բանականութիւնը կը հասնի գերազանց ցնծութեան որ իր բնական հասողութենէն ջատ աւելի բարձր է և անդին: Հաւատքի նուիրեալներ, ինչ անուն և պիտակ (դաւանանք և վարդապետութիւն) ալ ունեցած ըլլան, կը պատկանին Բրիստոնէութեան: Պէտք է ջփոթել, սակայն, հաւատքը՝ հաւատալիքին կամ դաւանանքին հետ, մին *տեսի՛լքն* է, իսկ միւսը անոր ջուրը:

Վարդապետութիւնն ու դաւանանքը, Թէեւ անհրաժեշտ և ստիպողական դարձած էին Յիսուսի Եկեղեցիին շինութեան համար, սակայն պէտք էր որ անոնք հաւատքի՛ տեղը գրաւէին: Արովհետեւ ի վերջոյ անոնք դարձան Եկեղեցիին բանդումին և կործանումին պատճառ:

Օրինակ:

Զարկեղունի Տիեզերածողովը 451 թուականին (ներկայիս Պոլսոյ Գատրգիւղ), վարդապետական դաւանանքը նախամեծար նկատելով հաւատքէն, տարակարծիքներու խրամատ վիճ մը բացաւ համաշխարհային եկեղեցիներու միջեւ, և բաժնեց Հայ, Ասորի, Եգիպտացի և Երովպիացի եկեղեցիները Բիւզանդական և Հռոմէական եկեղեցիներէն: 451-ին Հայ ազգը երբ իր հաւատքին համար կը պայքարէր ու կը նահատակուէր, Բիւզանդական եկեղեցականներ միանալով Արեւմտեան եկեղեցիներուն դարբնեցին *“երկայքնակ”* վարդապետութիւն մը նուաստացնելու համար Աղեփսանդոփոյ եկեղեցին: Արեւելեան եկեղեցիները մերժելով այս նորելուկ վարդապետութիւնը, շարունակեցին հաստատ մնալ Եփեսոսի 449 թուականի ուղղափառ *“միաքնակ”* վարդապետութեան:

“Միաքնակ” և *“երկայքնակ”* վարդապետութիւնները պատճառ դարձան որ Բրիտանեայ ազգեր իրարու չ’օգնեն և զիրար կոտորեն: Բիւզանդիոնի, վարդապետական ծայրահեղ սպառնալիքին պատճառաւ Հայաստան, Միջին արեւելք և Եգիպտոս, որոնք բոլորն ալ Բրիտանեայ ժողովուրդներ էին, կորսնցուցին իրենց ազգային և քաղաքական անկախութիւնը և դարձան Իսլամ: Միայն Հայ ազգը կրցաւ գոյատեւել իբր Բրիտանեայ: Ի վերջոյ Բիւզանդիոն՝ իր անտիկ դիրքով, չի կրցաւ պաշտպանել ի՛ր իսկ դարաւոր Կայսրութիւնը և տապալեցաւ ի՛նք ալ 1354-ին Օսման բանակներու ջախջախիչ հարուածներուն տակ:

Յիսուս Բրիստոս ջանաց **սիրո՛յ** շաղախով միացնել Իրեն հաւատացողները: Հաւատքի և սրբութեան զոհաբերութեամբ նուիրագործել Բրիտանեական ջարժումը: Որովհետեւ եկեղեցիին մէջ կը պակսէ՛ր այդ սերը, եկեղեցական իշխանութիւնները ջանացին զօդել Բրիտանեաները և Բրիտանեայ ազգերը, *վարդապետակա՛ն* և դաւանակա՛ն շաղախով:

Ինչպէս մարդկային դէմքը կը տարբերի մէկը միւսէն, նոյնպէս ալ մարդկային միտքը կը տարբերի իրարմէ իր **ըմբռնումի՛** զօրութեամբ: ՂԱստուած պաշտելու (հաւատալու) համար մարդիկ կը կարօտին “հոգիի և ճշմարտութեան”, ոչ վարդապետական դաւանանքներու: Յիսուս Բրիստոս պատգամեց Սամարուհիին և ըսաւ.

*«Մ՛՛կ կի՛ն, հաւատա՛ ինձի, որ պիտի գայ ժամանակ,
երբ ո՛չ այս լերան վրայ և ո՛չ ալ Երուսաղէմի
մէջ երկրպագութիւն պիտի ընեն Հօրը:...Ճշմարիտ
երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝
հոգիով և ճշմարտութեամբ»--Յով. Դ. 23-25:*

Երուսաղէմի տաճարը և Գարիգին լեռը կը ներկայացնէին Հրէական և Սամարիական տարբեր վարդապետութիւններ և դաւանանքներ: Ճշմարիտ երկրպագուները ո՛չ թէ վարդապետական արարողութեամբ պիտի փառաւորեն

զԱստուած, այլ՝ հաւատով, յոյսով և սիրով, ներշնչուած Սուրբ Հոգիէն:

Հետեւաբար, ազգեր, ժողովուրդներ, լեզուներ մշակոյթներ և աւանդու-
թիւններ շարունակ տարբեր ըմբռնումներ պիտի ունենան կրօնական
վարդապետութիւններու հարցի մը շուրջ: Այս է պատճառը, որ նոյնիսկ
գաղութներու մէջ կը տօնենք մեր սրբաշունչ տօները անջատաբար և
զանազան կամարներու ներքեւ...: Ինչո՞ւ, որովհետեւ «ես»ը գերադաս կը
դառնայ *վարդապետակա՛ն*, նկատումներով փոխանակ *սիրոյ*, և *հաւատո՛յի*:

398 թուականին, Յովհան Ոսկեբերան հրաւիրուեցաւ Բիւզանդիոն և
օծուեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարք: Յովհան Ոսկեբերան ազգութեամբ Ասորի էր:
Իր պերճախօսութեան և հոետորութեան համար կոչուած էր Ոսկեբերան:
Անոր նախանձորդներն ու հակառակորդները իր վարդապետութեան մէջ, իբր
թէ սխալանք մը գտնելուն համար, դատապարտեցին զինք 404-ին և
աքտրեցին Վիլիկիոյ ձիւնապատ լեռները, ուր բոպիկ, վշտահար և հիւժած
ան աւանդեց իր հոգին:

Ինչո՞ւ ըլլար այս կորուստը:

Որովհետեւ Կ. Պոլսոյ եկեղեցականները դարձած էին *վարդա-
պետակա՛ն*, Բրիստոնեաներ, *մտո՛յի* և *գիտութեան* մարդիկ, փոխանակ ըլլալու
սրոյի և *հաւատո՛յի* նուիրեալներ: Յիսուս Զրիստոսի հետեւողներ կանչուած
են ըլլալ *հաւատո՛յի և սիրոյ սպասարկու ներ*:

Այս գրութիւնը չի՛ դատապարտեր հաւատի վարդապետութիւնը կամ
դաւանաբը, այլ՝ կը դրսեւորէ հաւատի գօրութիւնը և նախապատիւ կը համարէ
հաւա՛տքը՝ վարդապետութենէն:

Մեր Տէրը Յիսուս Զրիստոս, նախ քան բժշկելը Իրեն դիմող
հիւանդներուն, կը հարցնէր անոնց թէ կը *հաւատա՞ն*: ներկայիս այդ
հարցումը փոխուած է *վարդապետութեան* և յարանուանութեան, թէ այս ինչ
կամ այնինչ անձնաւորութիւնը ի՞նչ վարդապետութեան կը հետեւի, կամ ո՞ր
յարանուանութեան անդամ է...:

Էական հարցը՝ ենթակային **հաւա՛տքը** ըլլալու է: Որովհետեւ,

***հաւատքը հոգիին աչքն է,
որ կրնայ տեսնել զԱստուած.***

Մայիս 14, 1992

Թորոնթօ

ՄԻՇՏ ԶՅՆՈՒԱԾ ՔՈՒ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

Առ, Տէր, կեանքս, ըլլայ թող ան
Միշտ ձօնուած բու սուրբ անուան.
Առ ձեռներս, և թող շարժին
Միշտ հըլու՝ սիրոյդ ուժին.
Առ ոտներս, և թող քաշեն
Միշտ ուղիդ՝ բու սուրբ ճամբէն.
Առ իմ ձայնս, և թող, ով Տէրս
Քեզ միայն ուղղեմ երգերս:

Առ ջրթներս, անոնց վըրայ
Սուրբ պատգամդ թող միշտ թրթռայ.
Առ ինչներս, տիրէ գանձիս,
Ձեմ պահեր բան մը անձիս.
Առ իմ խելքս, գործէ թող ան
Սուրբ կամփիդ միշտ համաձայն.
Ա՛ռ ժամերս, օրերս, որ յար
Քու սիրովդ սահին իսպառ:

Առ իմ կամքս, տիրէ անոր
Արդ. ով Տէր, կամփովդ հըզօր.
Առ նաեւ իմ սիրտըս չար,
Ձայն ըրէ հոգւոյդ տաճար.
Մէրս ալ առ, անոր գանձին
Դու եղիր տէրն առանձին.
Առ անձս ալ, թող այն, ով չայր,
Միշտ ապրի լոկ քեզ համար:

--Յ. Ք. ԳԱՅԱՆԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Լոյս տարին հո՛ն, ուր գիշեր էր
Անարջալոյս,
Յոյս տարին հո՛ն, ուր ձմեռ էր
Յուսակորոյս,
Երգ տարին հո՛ն, ուր արցունք կար
Անմխիթար,
Ո՛ւր վերք անբոյժ՝ հոն բալասան
Տարին բուրեան:
Ուրախութեան տարին բարեւ,
Զուարթ արե՛ւ՝ ուր կար անձրեւ
Տրամաթախիծ,
Տարին շուշան հո՛ն, ուր փուշ կար,
Եւ սէր՝ ուր հե՛ն
Եւ կեանք՝ ուր մա՛հ:

Ո՛ւր գերութիւն՝
Լուրդ տարին ազատութեան
Մը երջանիկ,
Ազատութի՛ւն տարին նոյնիսկ,
Զի Յիսուսի
Տարին անունը մէկ-հատիկ:

Տարին անունը Յիսուսի՝
Ու զաւակներ անոնք ծնան,
Տարին արիւնը Յիսուսի՝
Մեղաւորներ շուշանացան,
Տարին գարունը Յիսուսի՝
Ու ձմեռներ կանաչացան:

Ու երբ տարին սերն Յիսուսի,
Ճարականներ կարկաչեցին
Կեանքերն ի վար
Եւ զանգ առ զանգ
Մրտեր Զատի՛կ ղօղանջեցին,
Ալէլուիա՛...

--ժող Ա. Յակոբեան